ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ‹‹Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ›› ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ 0911.01.5-‹‹Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության մասնագիտական մոդուլներ դասավանդող մասնագետի (259 ժամ) թափուր աշխատատեղի համար: Պահանջվող որակավորումը՝ համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն, կամ տվյալ մասնագիտության զբաղվածության բնագավառում 5 տարվա աշխատանքային գործունեության փորձ:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. դիմում (Ձև 1),
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3. անձնագրի պատճեն,
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք,
5. ինքնակենսագրություն (Ձև 4),
6. մեկ լուսանկար 3x4 չափսի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի փետրվարի 5-ից մինչև փետրվարի 18-ը ներառյալ, ամեն աշխատանքային օր՝ ժամը 9.00-ից մինչև 16.00-ը:

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 21-ին՝ ժամը 13:00-ին, Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում:

Տեղեկությունների համար զանգահարել 093-15-93-81 հեռախոսահամարով: